ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2018 թվականի N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ N 17 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍԱՄՎԵԼ ԵԳՈՐԻ ՃԱՂԱՐՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596 հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Սամվել Եգորի Ճաղարյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 38,92 քմ ընդհանուր մակերեսով N 17 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 14-15 սենյակներ) անհատույց օտարել Սամվել Եգորի Ճաղարյանին՝ ծնված 1956թվականի հունվարի 20-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սամվել Եգորի Ճաղարյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Դեմ -0 Ձեռնպահ -0

Կողմ -7

1. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԳԵՈՐԳԻ

2. ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

3. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ

5. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

6. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ